«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 551-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

«----» «----------» 2020 թվականի N---- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 551-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 551-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման Հավելվածի 3-րդ կետի՝

ա) 1-ին ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1) երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը՝ այլընտրանքային խնամքի տրամադրումը դիտելով որպես տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ, սակայն պարտադրված միջոց, իսկ ճգնաժամային աջակցության կենտրոնում տեղավորելը՝ որպես ժամանակավոր լուծում.»:

բ) 3-րդ ենթակետում «ընտանեկան տիպի մանկատուն» բառերը փոխարինել «ճգնաժամային աջակցության կենտրոն» բառերով:

2) Որոշման Հավելվածի 4-րդ կետի՝

ա) 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) կենսաբանական ընտանիքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում 0-3 տարեկան երեխաների խնամքի կազմակերպում բացառապես խնամատար ընտանիքում կամ ճգնաժամային աջակցության կենտրոնում.»:

բ) 5-րդ ենթակետում «երեխայի խնամքի գիշերօթիկ, ինչպես նաև» բառերը հանել:

3. Որոշման Հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ. «7) ճգնաժամային աջակցության կենտրոնում տեղավորված երեխաների՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու հնարավորության բացառման դեպքում՝ խնամքը կազմակերպել հետևյալ առաջնահերթությամբ՝ որդեգրման հնարավորության դեպքում՝ որդեգրում, խնամակալի, խնամատարի ընտանիք»:

4) Որոշման Հավելվածի 5-րդ կետի՝

ա) 4-րդ և 6-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

բ) 5-րդ ենթակետում «երեխաների» բառից հետո լրացնել «ցերեկային» բառը.

գ) 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ ենթակետերով.

«8) երեխայի խնամքը ճգնաժամային աջակցության կենտրոնում.

9) 16-23 տարեկան անձանց խնամքը և մասնագիտական հմտությունների ձեռքբերման կազմակերպումը անկախ ապրելակերպ ուղեկցող ծառայություն.»:

5) Որոշման Հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետում «սոցիալական հոգածության կենտրոնում,» և «երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունում,» բառերը հանել:

6) Որոշման Հավելվածի 7-րդ կետի՝

ա) 4-րդ և 6-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

բ) 5-րդ ենթակետում «երեխաների» բառից հետո լրացնել «ցերեկային» բառը.

գ) 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ ենթակետերով.

«8) երեխայի խնամքը ճգնաժամային աջակցության կենտրոնում.

9) 16-23 տարեկան անձանց խնամքը և մասնագիտական հմտությունների ձեռքբերման կազմակերպումը անկախ ապրելակերպ ուղեկցող ծառայությունում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն Որոշման 2-րդ

կետի 1-ին ենթակետը, որն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից: